Խ. Ս. Հ. Մ-ի ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

# ՀՐԱՀԱՆԳ

## 1938 Թ. ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ԲԵՐՔԸ ՀԱՆԵԼՈՒ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Թարգմանություն ռուսերենից)

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆ 1938 Թ.

3 MAR 1978

Խ. Ս. Հ. Մ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
Խ. Ս. Հ. Մ. ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԱՏ

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆՔ**

ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԻ ՏԵՂԱԿԱԼ
Վ. ՎՈԼԿՈՎ

ԽՍՀՄ ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԺՈՂԿՈՄԻ ՏԻՂԱԿԱԼ
Պ. ԺԵՄՉՈՒԺԻՆԱ

*8 օգոստոսի 1938 թ.*

# ՀՐԱՀԱՆԳ

## 1938 Թ. ՇԱՔԱՐԻ ԲԵՐՔԸ ՀԱՆԵԼՈՒ, ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Հողժողկոմատը և ԽՍՀՄ-ի Սննդարդյունաբերության ժողկոմատը առաջարկում են կոլտնտեսությունների վարչություններին ՄՏԿ-ների դիրեկտորներին, շրջհողժողբաժինների վարիչներին, ավտոկայանների պետերին և շաքարի գործարանների դիրեկտորներին, շաքարի ճակնդեղը հանելու, տեղափոխելու և շաքարի գործարանների մթերման կայաններում ընդունելու ժամանակ, ղեկավարվել ներքեվում բերված ցուցմունքներով։

1. Ճակնդեղը հանելու համար շաքարի գործարանների դիրեկտորները ՄՏԿ-ի դիրեկտորների, ավտոկայանների պետերի և կոլտնտեսությունների նախագահների հետ միասին ճակնդեղը հողից հանելը սկսելուց առաջ, վորոշում են մթերակայանների և ճակնդեղի դաշտերի մեջ ընկած հեռավորությունները, կոլտնտեսություններին ճակընդեղը փոխադրելու լրացուցիչ վճարի չափը վորոշելու համար և ներկայացնում են ի հաստատություն շրջանային գործադիր կոմիտեներին։

Շրջգործկոմի հաստատած յուրաքանչյուր կոլտնտեսության հեռավորությունը պարտադիր է կոլտնտեսության, շաքարի գործարանի և ավտոկայանների համար կոլտնտեսությունների բերած ճակնդեղի լրացուցիչ վճարի հաշվարկումները կատարելու և ավտոկայանների կողմից ճակնդեղը տեղափոխելու մեքենաների փոխադրավարձը վճարելու ժամանակ։

2. Շրջհողբաժնի վարիչները ՄՏԿ-ի և շաքարի գործարանների դիրեկտորների և համապատասխան կոլտնտեսությունների նախագահների հետ միասին պարտավոր են սույն թվի սեպտեմբերի 1-ից վոչ ուշ վո-



ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ
1-39744գր

րոշել տվյալ կոլտնտեսության ճակնդեղը հողից հանելու և տեղափոխելու վերջնական օրացուցային պլանը (գրաֆիկան) համաձայն ԽՍՀՄ-ի—ԺԿԽ-ի ս/թ հունիսի 23-ի վորոշման։

Իսկ գործարաններին կցված, սեպտեմբերի 10-ից վաղ բերքահավաքը սկսող կոլտնտեսությունների համար-համաձայն գործարանները գործի դնելու ԽՍՀՄ-ի Սննդարդյունաբերության ժողկոմատի սահմանած ժամկետների։

Կոլտնտեսության վարչությունը Շրջգործկոմի հաստատած օրացուցային պլանի համաձայն սահմանում է յուրաքանչյուր դաշտի ճակնդեղը հանելու և տեղափոխելու աշխատանքային պլանը, հաշվի առնելով առանձին դաշտերի ճակնդեղի հասունությունը, բայց խիստ կերպով հաշվի առնելով կառավարության կողմից սահմանված ժամկետները, կոլտնտեսության կողմից սահմանված հանելու և տեղափոխելու աշխատանքային պլանը քննել բրիգադների և օղակների ընդհանուր ժողովներում և բացատրել կոլտնտեսականներին, կոլտնտեսությանը պարգեվ հավելում տալու, օղակի անդամներին ճակնդեղը հանձնելու

պլանը գերակատարելու համար պտղատվության չափը և կարգը, ինչպես նաև ճակնդեղը հանձնելու համար լրացուցիչ փոխադրավարձ ստանալու կարգի մասին։

3. Առաջարկել կոլտնտեսությունների վարչություններին, ստոլբիրյաներով. ճակնդեղի արմատները հանել առանձին և մթերման կայանին հանձնել թփերով։

4. Ճակնդեղը հողից հանել խնամքով, թույլ չտալ, որ արմատները վնասվեն։ ՄՏԿ-ը պարտավոր այդ աշխատանքի համար առանձնացնել փորձված տրակտորիստներին։ Ճակնդեղահանով բարձրացրած ճակնդեղը հողից հանել ճակնդեղահանի հետևից և դարսել կույտերում թփերը դեպի դուրս. ճակնդեղհանի չբարձրացրած բաց թողած արմատները հանել ձեռքի բրիչներով։

5. Արմատները հողից մաքրել թափահարելով և դանակի բութ կողմով։ Արգելվում է արմատը հողից մաքրել դանակի սուր բերանով արմատներն իրար խփելով, ինչպես նաև ճակնդեղը կտրելու և մաքրելու համար մանկաղ գործածելը։

Հանած ամբողջ ճակնդեղը մաքրել թփերից աչքերով բացառապես նույն օրը թուփ կտրող գործիքներով և դանակներով։ Պոչերը և կողքի շյուղերը կտրել մեկ սանտիմետր



հաստությամբ։ Խոնավ փչակները մաքրել մինչև սպիտակ մարմնին հասնելը. իսկ չոր փչակները թողնել առանց մաքրելու։

6. Ճակնդեղը մաքրելու ժամանակ տեսակավորել յերկու կարգի, յուրաքանչյուր կարգը դարսել առանձին կույտերով։

ա) Մի կույտի մեջ դասել բոլոր առողջ, չվնասված 100-գրամից ավելի քաշ ունեցող, ինչպես նաև չոր փչակներով արմատները։

բ) Յերկրորդ կույտի մեջ դարսել մինչև սպիտակ մարմինը մաքրած խոնավ բաց փչակներով, հանելու և մաքրելու ժամանակ վնասված, պոչերը կտրված, մկների կրծոտած, թառամած, ինչպես նաև 100-գրամից պակաս քաշ ունեցող ճակնդեղի արմատները։ Ճակնդեղի այս կույտի վրա դնել հատուկ նշան և տեղափոխել մթերման կայաններն առողջ ճակնդեղներից առանձին։

7. Ճակնդեղը հողից հանելու և տեղափոխելու ժամանակ արգելվում է մի օղակի ճակնդեղը խառնել ուրիշ օղակի ճակնդեղին. Ճակնդեղահանի հետևից հողից ճակնդեղը ժամանակին հանելու և մաքրելու համար առանձին օղակներում բանվորական ուժը անբավարար լինելու դեպքում բրիգադներն ու կոլտնտեսության նախագահը պարտավոր

են ոգնություն կազմակերպել այդ ողակներին, ի հաշիվ այդ աշխատանքներով զբաղվող կոլտնտեսականների։

8. Կոլտնտեսությունների նախագահները պարտավոր են յուրաքանչյուր ողակին տալ չափամաններ, վորպեսզի բոլոր ողակներն էլ կարողանան հաշվել իրենց դաշտերի ճակնդեղի բերքը։

9. Մաքրած ճակնդեղը մինչև չափամաններով չափելը պետք է անպայման ծածկել մաթերով կամ կոպիտ քաթաններով։

Չափելուց հետո ճակնդեղը դարսել կանոնավոր կոնաձև կույտերով և ծածկել։ Կույտերի բարձրությունը պետք է լինի վոչ պակաս 80-90 սանտիմետր կույտերը դարսելու տեղերը նախապես պետք է հարթել ու մաքրել մոլախոտերից, թփերից։ Կույտերը տեղավորել ուղիղ գծով ու զուգահեռ շարքերով։

10. Կույտերում դարսած ճակնդեղն արևի տաքացնելուց և թոշնելուց, իսկ հետագայում ցրտերից պաշտպանելու համար պետք է անմիջապես ծածկել։ Վոչ մի դեպքում չի թույլատրվում կույտերն թողնել առանց ծածկելու։

Դաշտի կույտերն, ճակնդեղն հանելու ա-



ռաջին շրջանում, պետք է ծածկել հավաքած խոնավ հողով։ Յերբ հողի յերեսի շերտը շատ է տաքացել ու չորացել կույտերը ծածկել հետևյալ կերպով՝ հողի յերեսի շերտը մի կողմ գցել և կույտը ծածկել ներքևի, ավելի քիչ տաքացած և ավելի խոնավ հողի շերտով կույտը գագաթին բաց թողնել առանց ծածկելու 15-սանտիմետր տրամագծով ոդանցք։ Այս ոդանցքը միայն թփերով։ Ծածկի հողի շերտի հաստությունը լինելու յե վոչ պակաս 10-15 սանտիմետր։

11. Աշնան ցրտերն սկսվելուց առաջ ճակնդեղը թեթևակի ցրտահար լինելուց խուսափելու համար, կույտերը ծածկել թփերով ու հողով. նախ ամբողջ կույտը ծածկել 3-4 սանտիմետր հաստությամբ թփերի շերտով և վերևից էլ ծածկել 10-15 սանտիմետր հաստությամբ հողի շերտով։ Ոդանցքը ծածկել թփերով և վրան 4-5 սանտիմետր հաստությամբ հողի շերտով։ Վրացական ԽՍՀ-ի, Հայկական ԽՍՀ-ի, Կիրգիզական ԽՍՀ-ի, Ղազախական ԽՍՀ-ի և Կրասնոդարյան յերկրամասի ճակնդեղացան շրջաններում, ճակնդեղի կույտերը բոլոր դեպքերում ծածկել միայն հողով։

12. Ցերկոսպորյայի դեմ պայքարելու նպատակով, անասունների կերի և սիլոսաց-

ման համար, անպետք բոլոր թփերն անպայման պետք է հավաքել ու թաղել հողի մեջ՝ առնվազն կես մետր խորությամբ։

## 2. ՃԱԿՆԴԵՂԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՄՏԿ-ների դիրեկտորները և կոլտնտեսությունների նախագահները, սեպտեմբերի 1-ին պետք է ավարտեն ճանապարհների շինարարությունը և նորոգումը, իսկ շաքարի գործարանների դիրեկտորները պետք է նույն ժամկետին ավարտեն դեպի գործարան տանող ճանապարհների նորոգումը և սալահատակումը, մթերման կայաններում դեպի կշեռքները ժամի փոսերը նաև դեպի կագատները տանող ճանապարհների սարքավորումը։

Շաքարի գործարանների դիրեկտորները ճակնդեղի ընդունման ամբողջ շրջանում, պետք է ապահովեն ճանապարհների բարեվոք վիճակը։

14. Ավտոկայանների պետերը, ՄՏ կայանների դիրեկտորները և կոլտնտեսությունների վարչությունները, պարտավոր են ճակնդեղը մթերման կայանները տեղափոխել խստիվ համաձայնեցրած կոլտնտեսությունների համար շրջգործկոմների կողմից հաստատված օրացուցային պլանի հետ՝ այն հաշվով վորպեսզի վերջացնել ամբողջ ճակնդեղի հանձնումը կառավարության կողմից սահմանված ժամկետներին։

15. Ճակնդեղը տեղափոխելու համար, յուրաքանչյուր բրիգադայում առանձնացնել տեղափոխողների մշտական խումբ, վորոնց կցել վորոշ ողակներին։

Տեղափոխողները պարտավոր են տեղափոխել իրենց կցած ողակի հողամասերի ճակնդեղը, չխառնելով մի ողակի ճակնդեղը մի ուրիշ ողակի ճակնդեղի հետ։ Դաշտավարական բրիգադների բրիգադիրների և տեղափոխողների վրա դնել ճակնդեղն անվնաս պահելու և յուրաքանչյուր ողակի առանձին ճակնդեղի ճիշտ հաշիվները տանելու պատասխանատվությունը։

16. Ճակնդեղը բառնալու համար, կոլտնտեսություններում կառուցել շարժական և ստացիոնար բունկերներ։ Կոլտնտեսությունների վարչություններն առանձնացնել մշտական կոլտնտեսականներ ճակնդեղը բեռնելու և բեռնաթափելու համար, վորոնցից մի մասը մնում է ճակնդեղի դաշտերում բունկերների մոտ, իսկ մյուս մասը՝ ճակընդեղի մթերման կայաններում։ Ճակնդեղն

ավտոմեքենաներով կրելու դեպքում արգելել շոֆերներին ավտոմեքենայի վրա, մթերման կայանում ճակնդեղը բեռնաթափվելու համար կոլտնտեսականներ վերցնելը: Ավտոմեքենաների վրա կարող է լինել միայն մի կոլտնտեսական—կոլտնտեսության վարչության կողմից ճակնդեղը հանձնելու լիազորը:

17. Կույտերը բաց անել միայն ճակնդեղը սայլերի կամ ավտոմեքենաների վրա բեռնելուց առաջ: Ճակնդեղը թոշնելուց պաշտպանելու համար, բունկերներն ծածկել մատերով կամ կոպիտ քաթանով.

18. Ճակնդեղը բեռնելու ժամանակ արգելել սրածայր յեղաններից օգտվելը, գործածել միայն բութ ծայր ունեցող ճակնդեղի յեղաններ և թույլ չտալ, վոր յեղաններով խփեն ճակնդեղին:

19. Ճակնդեղը բեռնասայլերով տեղափոխելու ժամանակ, ճանապարհին արմատները թափելուց խուսափելու համար սայլերի վըրա դնել ամուր արկղներ, կամ հյուսված զամբյուղներ, իսկ վորպեսզի ձիերը չկրծոտեն արմատները, սայլերի հետևին դնել բարձր վահաններ:

20. Ճակնդեղը բունկերների մոտ և մըթերման կայանները տեղափոխելու ժամա-



նակ ծածկել կոպիտ քաթաններով, պարկերով կամ մաթերով: Արգելվում է ճակնդեղը ծածկել թփերով ու ծղնոտով.

21. 6-րդ կետի «Ա» հոդվածով ցույց տված կույտերում դարսած ճակնդեղը տեղափոխում են անպայման առանձին նույն հրահանգի 6-րդ կետի «Բ» հոդվածի մեջ հիշված առանձնացրած ճակնդեղից: Սայլապաններն ու շոֆերներն պարտավոր են չընդունել բեռնելու համար այն ճակնդեղը, վորը չի տեսակավորվել նույն հրահանգի 6-րդ կետի համաձայն:

## 3. ՃԱԿՆԴԵՂԻ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Այն դեպքում, յերբ կոլտնտեսությունը ճակնդեղի մթերման կայան է բերել կոնդեցիային չհամապատասխանող ճակնդեղ, առնժանված կոնտրակտացիոն պայմանագրով, շաքարի գործարանը ճակնդեղը չի ընդունում, իսկ կոլտնտեսությունը պարտավոր է ճակընդեղը մթերման կայանը հասցնելու որը տեսակավորելու ճակնդեղն այնպես, ինչպես ցույց է տրված նույն հրահանգի 6-րդ կետում: Շաքարի գործարանը կոլտնտեսությանը տեղ է տրամադրում տեսակավորելու վոչ կոնդիցիոն ճակնդեղը: Շաքարի գործա-

րանը պարտավոր է ընդունել վերատեսակավորված և կոնդիցիոն դրության բերած ճակընդեղը։

23. Ճակնդեղի մթերման կայանին առողջ ճակնդեղի փոխարեն քիչ ցրտահար կամ նեխված, ցրտահար յեղած ու հալված ճակընդեղ տալու դեպքում, կոլտնտեսությունը պարտավոր է այդպիսի ճակնդեղը տեսակավորել իր միջոցներով, վորի համար ցրտահար ճակնդեղներն առանձնացնել առողջներից, կտրատել նեխված մասը մինչև առողջ մարմնին հասնելը, տեսակավորել ու բաժանել առողջներն առատավորներից և առանձին հանձնել գործարանին, իսկ գործարանը պարտավոր է ընդունել այդ մաքրելուց և տեսակավորելուց հետո։ Ջոկած ցրտահար ու նեխված ցրտահար ու հալված ճակնդեղներն ընդունելիս, ստացականի վրա նշել «Ատառան»։ Շաքարի գործարանի կողմից ՄՏԿ-ի դիրեկտորներին, գյուղատնտեսներին ճակնդեղացան կոլտնտեսությունների նախագահներին և բրիգադիրներին անհատական սպառդեֆավորման չափը վորոշելու ժամանակ «Ատառան» նիշով ընդունված ճակընդեղը հաշվի չի առնվում։

24. ՄՏԿ-ի գյուղատնտեսները պարտավոր են հրահանգել կոլտնտեսականներին ճա-



կընդեղը հողից հանելուց առաջ և հանելու ժամանակ, ճակնդեղը մաքրելու և տեսակավորելու կարգի մասին։ Բացի այդ, կոլտնտեսությունների նախագահները, բրիգադիրները և ՄՏԿ-ի գյուղատնտեսները, ճակնդեղի հանձնման առաջին օրերը պետք է անձամբ ներկա գտնվեն մթերման կայաններում, վորպեսզի տեղում սովորեն ճակնդեղի տեղափոխման և ընդունելու կազմակերպման ճըշտությունը և դրանով սովորեցնեն կոլտընտեսականներին ճակնդեղի մաքրելը, տեսակավորելը, բեռնելն ու գործարան տեղափոխելը։

25. Գործարաններից մինչև 25 կիլոմետր հեռավորության վրա գտնվող դաշտերից ճակընդեղը ավտոմեքենայով տեղափոխելու դեպքում ՄՏԿ-ն և կոլտնտեսությունները պարտավոր են առանց մթերման կայան տանելու հանձնել ուղղակի շաքարի գործարանին։ Ավելնորդ հեռավորության փոխադրավարձը ավտոկոլոնային վճարում է շաքարի գործարանը։ Այն ճակնդեղը, վորը տեղափոխվում է սայլերով ընդունվում է մոտակա մթերման կայանում։

26. Շաքարի գործարաններին և յերկաթուղային խոշոր կետերին կից բոլոր մթերման կայաններում, վորտեղ ընդունվում են

300 հազար ցենտներից վոչ պակաս ճակընդեղ, շաքարի գործարանների դիրեկտորները պարտավոր են կազմակերպել կարմիր անկյուններ, թեյարաններ, ճակնդեղ բերող սայլապաններին ու շոֆերներին քաղցր թեյ բաց թողնելու համար։

27. Շաքարի ճակնդեղը հափշտակումներից ու կորուստներից պաշտպանելու համար, կոլտնտեսականների նախագահները պարտավոր են՝

ա) Կազմակերպել ճակնդեղի դաշտերի ամբողջ օրյա 24-ժամյա պահակություն և նախազգուշացնել ամեն մի սայլապանի իր անձնական պատասխանատվությամբ մթերման կայանը տարած ճակնդեղի ամբողջականության համար։

բ) Թույլ չտալ անասուններին մինչև ճակընդեղի տեղափոխման ավարտելը և ճակընդեղը հողից հանելն ավարտելուց հետո կոլտնտեսության նախագահի կողմից դաշտի ընդունելը։

28. Ճակնդեղից ազատված հողամասերն ողակներից բրիգադիրը պետք է ընդունե ամեն օր, ամեն 5-օրը մեկ անգամ կոլտնտեսության վարչությունը բրիգադաներում ստուգում է ճակնդեղի հանելու և փոխադրման աշխատանքների վորակը։



Ճակնդեղի հողից հանելն ու տեղափոխելն ավարտելուց հետո, կոլտնտեսությունների նախագահները պետք է վերջնական ստուգում կատարեն արմատները հողից հանելու և կույտերից ու բունկերներից հավաքելու խնամքով ու ճիշտ կատարած լինելը։ Յեթե ստուգման ժամանակ գտնեն, վոր դաշտում մնացել են չհանված կամ չհավաքած ճակնդեղի արմատներ. ողակը պարտավոր է կրկին անգամ փորել ու հանել և միայն յերկրորդ անգամ ստուգելուց և դաշտում չհանված ու չհավաքած արմատներ չլինելու դեպքում միայն ընդունել դաշտը։

ԽՍՀՄ-ի Հողկոմատի գլխավոր ճակնդեղային վարչության պետ՝

**ՆԱԶԱՐՅԵՎ**

ԽՍՀՄ-ի Սննդարդյունաբերության ժողկոմատի Գլավսախարի պետի տեղակալ՝

**ԱԼԵԿՍԵՅԵՎ**

ԼԵՆՏԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ № 3169 տիրաժ 1000 Պատվեր № 945

ՀՀ Ազգային գրադարան
NL0938981

17 OKT. 1938 4

1
3974